և պարսպեալ ամրացոյց և եդ զդուռն երկաթի ի վերայ մոգաց և գրեաց ի վերայ դրանն, թէ՝ յորժամ ի յետին դարէն անցանի ՊԿԶ տարի, անկանի դուռն այն և ելանեն ԻԴ թագաւորութիւնք և ապականեն զաշխարհըս Աճուճայ և Բաճուճայ կոչեցեալ, զոր Յովհաննէս Աւետարանիչն Գոգ և Մագոգ կոչէ վասն անթիւ բազմութեանն։

«Եւ յետ նորա գաւառք՝ Գոգացիք, Շաքին է, Ալանք՝ Շերուան է և Շամախի»։

Վարդան Աշխարհազրի և քանի գրեանց յօդուածներն քաղեցինք Տփխիսում 1894 թուի մայիսին, սուրբ Սարգիս ուխտատեղւոյ սենեակներումն բնակելով, սարկաւագ Մարտիրոս Անտոնեանի գրքերից, որ ուղածս գիրքը գտնում էր և բերում, որոյ մասին չնորհակալութիւն։ Եսայի Կաթուղիկոս Աղուանից իւր պատմութեան կամ յիշատակարանի մէջ (ի Ղուշի, 1839. յերես 4) Դարբանդն համարէ Հունարակերտ ամուրն լինել. և այսպէս ասէ.

«Եւ ապա հատանի ի լեառն Կովկասու, դարձեալ ի նոյն ամուրն Հունարակերտ՝ այսինքն է Դարբանդ, և ի տեղի կայից գըլխաւորի լեռնորդացն, զոր Շամխալն անուանին, և անուն տեղւոյ նորին Թարխու կոչեցեալ[1]) ևն.։

Մեր ազգային պատմութեան մէջ Դարբանդը նշանաւոր է մեր Հեթում Ա. թագաւորի 1254 փրկչական թուին Թաթարաց Մանկու խանին տեսութիւն գնալոյ միջոցին Դարբանդ պատահելով, որոյ համար Կիրակոս պատմագիրը գրէ հետեւեալ կարգաւն (1858. Մոսկուա յերես 219 – 221).

«Մեծահաւատ և Քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում Ա. որ ի կողմանս Կիլիկեցւոց նստէր ի քաղաքն Սիս (1253) . . . ։ Եկն ի Կարս քաղաքն և տեսեալ զԲագուանուինն, որ զօրապետ էր

---

[1])1843 թուի Վենետիկեան «Բազմավէպ»ի մէջ գրուած է, որ Թարխու կամ Թարքու անունով քաղաքաւեղումն կայ բեւեռաձեւ արձանագրութիւն։